


# Եվրոպական կանոնադրությունը՝ երիտասարդական աշխատանքում

**Ժողովրդավարական հասարակությունը երիտասարդների ձայների և ակտիվ մասնակցության կարիքն ունի:** Այն իրականացնելու համար, երիտասարդներին անհրաժեշտ է մի վայր, որտեղ նրանք կարող են սահմանել իրենց օրակարգը: Վայր, որտեղ երիտասարդները, իրենց հասակակիցների հետ միասին, կարող են ուսումնասիրել, արտահայտել և զարգացնել իրենց հետաքրքրություններն ու տաղանդները և ապագայի մասին իրենց գաղափարները: **Վայր, որտեղ նրանք ստանում են խթան և աջակցություն՝ հետագայում որպես անհատներ և քաղաքացիներ, իրենց գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքները զարգացնելու, իրենց ամբողջ ներուժին հասնելու համար:** Երիտասարդական աշխատանքը այդ տարածքն է, իսկ երիտասարդները<sup>1</sup> դրա հիմնական շահագրգիռ կողմերն են, և միշտ պետք է լինեն: **Հետևաբար, երիտասարդական աշխատանքը, որպես այդպիսին, սովորելու գործընթաց է ոչ միայն երիտասարդների, այլև հասարակության համար:** Դա շահավետ ներդրում է: Հասարակության համար, որը ձգտում է ներառման և սոցիալական համախմբման, երիտասարդական աշխատանքը կարևոր դեր ունի:



Երիտասարդական աշխատանքի գերակա նպատակները նշված են ինչպես Եվրամիության, այնպես էլ Եվրոպական խորհրդի մի շարք քաղաքականության փաստաթղթերում:<sup>2</sup> Սակայն այս կանոնադրությունը, քաղաքական փաստաթուղթ չէ: Փոխարենը, այն վերափոխում է այս փաստաթղթերը կոնկրետ ուղեցույցների՝ ցույց տալով, թե ինչն է անհրաժեշտ տեղական երիտասարդական աշխատանքում որակ հաստատելու և պահպանելու համար: **Կանոնադրության գաղափարը առաջին անգամ մեկնարկեց 2015 թվականին Բրյուսելում տեղի ունեցած «Երկրորդ երիտասարդական աշխատանք» կոնվենցիայի Ժամանակ:** Հռչակագրում նշվեց, որ «Կոնվենցիան պահանջում է տեղական մակարդակում ավելի շատ տեղեկացվածություն ապահովել այս պատասխանատվության վերաբերյալ և համաձայնեցնել Եվրոպական կանոնադրությունը երիտասարդական աշխատանքում, տեղական և տարածաշրջանային իշխանությունների հետ»: Դրդապատճառը երիտասարդների աշխատանքի ընդհանուր հիմք ստեղծելն էր: «Էրազմուս + 22» ազգային գործակալությունների հայտարարությունից ի վեր երիտասարդական ոլորտում՝ մեր գործընկերները InterCity- ի Երիտասարդական ցանցի, POYWE ցանցի, Եվրոպական երիտասարդական ֆորումի հետ միասին, ինչպես նաև ԵՄ-ի և Եվրոպական խորհրդի գործընկերությամբ, սկսվեց «Էրազմուս+» ռազմավարական համագործակցության ծրագիրը՝ Europe Goes Local<sup>3</sup> նախագիծը: Կանոնադրությունը այս ծրագրի հիմնական արդյունքներից մեկն է:

Այն մշակվել է Եվրոպական խորհրդատվական գործընթացի միջոցով, ներգրավելով բոլոր մակարդակներում շահագրգիռ կողմերի լայն շրջանակ, ներառյալ կառավարություններ, քաղաքապետարաններ, հասարակական կազմակերպություններ, երիտասարդական կազմակերպություններ ու խորհուրդներ, հովանոց կազմակերպություններ և այլն: Այսպիսով, այն ստեղծվել և պատկանում է Եվրոպական երիտասարդական աշխատանքի համայնքին և վերաբերում է բոլորին՝ սկսած քաղաքականություն մշակողներից մինչև երիտասարդական աշխատողներ և երիտասարդներ, ովքեր զբաղվում են երիտասարդական աշխատանքով և ցանկանում են բարելավել այն:



**Կանոնադրության նպատակն է՝ նպաստել տեղական երիտասարդական աշխատանքի հետագա զարգացմանը:** Դա արվում է՝ նշելով, թե որ սկզբունքները պետք է առաջնորդվեն և ինչպես պետք է նախագծվեն դրա տարբեր կողմերը, այս սկզբունքներին համապատասխանելու համար: Այսպիսով, կանոնադրությունը ընդհանուր եվրոպական հարթակ է՝ երիտասարդության աշխատանքի վերաբերյալ անհրաժեշտ երկխոսության համար: Դա ազատ օգտագործման մեթոդաբանական գործիք է, որը գործում է որպես ստուգաթիթ, որի շուրջ շահագրգիռ կողմերը կարող են հավաքվել և քննարկել, թե ինչ միջոցներ անհրաժեշտ կլինեն երիտասարդական աշխատանքի հետագա զարգացման համար՝ վստահ լինելով, որ որևէ կողմ կամ հեռանկար չի բացառվի, և որ երիտասարդների աշխատանքի ապահովումն իրականացվում է լավագույն և արդյունավետ եղանակով: Հետևաբար, կանոնադրությունը պետք է դիտարկվի որպես ամբողջություն, որի ենթակետերը նշված են, ոչ թե առաջնահերթությամբ, այլ տրամաբանությամբ:



**Այնուամենայնիվ, երիտասարդական աշխատանքը բնութագրվում է իր հարուստ բազմազանությամբ, ոչ միայն գործնականում, այլ նաև դրա կազմակերպմամբ, ղեկավարմամբ և ֆինանսավորմամբ:** Նույնիսկ եթե երիտասարդական աշխատանքի ճնշող մեծամասնությունը ունի իր ելակետը և տեղի է ունենում տեղական մակարդակում, տարբեր մակարդակի տարբեր պատասխանատուներ պատասխանատու են սույն կանոնադրության մեջ նշված տարբեր հարցերի համար: Նրանցից ոչ ոք չի կարող ինքնուրույն բավարարել իր բոլոր պահանջները, ոչ ոք չի կարող հրաժարվել պատասխանատվությունից: Կանոնադրությունը, տարբեր տեղական իրողություններում կիրառելու վերաբերյալ քննարկումներին աջակցելու համար, պետք է ուղեկցվի օկլայն, ինտերակտիվ գործիքակազմով, որը տրամադրում է տարբեր հեռանկարներ, բացատրություններ, տեղեկատու փաստաթղթեր և լավ պրակտիկայի օրինակներ՝ կապված տարբեր բաժինների և ենթակետերի հետ:

1 Սակայն երիտասարդները միատարր խումբ չեն: Նրանք ունեն տարբեր ծագումներ, հետաքրքրություններ և գաղափարներ, հետևաբար դրանք կարող են կազմակերպվել կամ չկազմակերպվել: Այս և այլ տարբերությունների պատճառով, նրանք ունենալու են տարբեր կարիքներ: 2 Այս փաստաթղթերից են՝  
 • խորհրդի եզրակացությունները երիտասարդական աշխատանքի որակի զարգացման ներդրման, ինչպես նաև երիտասարդների բարեկեցության և սոցիալապես ներգրավման վերաբերյալ (2013 / C 168/03):  
 • Օրակարգ 2020, Եվրոպական խորհրդի երիտասարդական քաղաքականության վերաբերյալ CM / Res (2008) 23  
 • բանաձևը: Եվրոպական խորհրդի երիտասարդական աշխատանքի վերաբերյալ առաջարկությունը (CM / Rec (2017) 4):  
 • Հզորացնելով երիտասարդներին. Եվրամիության երիտասարդական նոր ռազմավարությունը (COM / 2018/269 եզրափակիչ):  
 3 Ծրագիրը ֆինանսավորվում է «Էրազմուս +» ծրագրի անդրազգային համագործակցության գործունեության շրջանակներում:

- ★ հիմնված լինեն կամավոր մասնակցության վրա: Կամավորները՝ այն երիտասարդներն են, ովքեր ակտիվ են երիտասարդական աշխատանքում՝ ելնելով իրենց կամքից և դրդապատճառներից:
- ★ հիմնված լինեն երիտասարդների կարիքների, հետաքրքրությունների, փորձի, գաղափարների վրա, ինչպես իրենք են ընկալում դրանք՝ դրանով իսկ կյանքին ավելացնելով հավելյալ արժեք և / կամ ուրախություն:
- ★ ստեղծեն, կազմակերպեն, պլանավորեն, պատրաստեն, իրականացնեն և գնահատեն երիտասարդների հետ միասին (կամ այդ ամենը պետք է իրականացվի նրանց կողմից):
- ★ նպաստեն երիտասարդների անձնական և սոցիալական զարգացմանը ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման միջոցով:
- ★ խթանեն երիտասարդների ինքնորոշումը, ինքնավարությունը և իրավունքների հասանելիությունը:
- ★ ունենան ամբողջական պատկերացում երիտասարդների վերաբերյալ և ընդունեն նրանց այնպես, ինչպես որ կան՝ որպես ընդունակ անհատներ և առաջնային ռեսուրսներ, իրենց իսկ կյանքի և ամբողջ հասարակության համար:
- ★ խթանեն քննադատական մտածողությունը և ստեղծագործական միտքը, ինչպես նաև մարդու իրավունքները, ժողովրդավարական արժեքները և ակտիվ քաղաքացիությունը::
- ★ առաջարկեն բոլոր երիտասարդներին հավասար հնարավորություններ:



- ★ Այն զարգացած է՝
  - վերը նշված հիմնական սկզբունքների շրջանակներում և դրանց համապատասխան,
  - բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ երիտասարդների հետ, հստակ դերեր և մանդատներ ունենալու և գործընթացի բոլոր փուլերում ներգրավված լինելու հիման վրա,
  - երիտասարդների կարիքների, իրավունքների և հետաքրքրությունների, ինչպես նաև նոր հետազոտությունների և երիտասարդական աշխատանքի տարբեր ձևերի և մեթոդների վերաբերյալ համապատասխան և թարմացված գիտելիքների հիման վրա, որոնք կարող են օգտագործվել նպատակները բավարարելու համար:
- ★ Հիմնված է հստակ, որակական և քանակական չափորոշիչների հիման վրա, որոնք վերաբերում են երիտասարդների մասնակցության, ազդեցության և ուսում ձեռք բերելու հետ:
- ★ Հատկացնում է ռեսուրսներ, որոնք կապված են նպատակների հետ:
- ★ Պարունակում է հստակ և ըստ քաղաքականության հաստատված տեղական նպատակներ և խնդիրներ՝ միաժամանակ հարգելով տեղական հասարակական կազմակերպությունների ինքնավարությունը:
- ★ Հստակ տեղակայված է բոլոր մակարդակներում՝ տեղականից մինչև եվրոպական՝ կապված լինելով ավելի լայն երիտասարդական քաղաքականության հետ:.



- ★ ստեղծել երկխոսություն բոլոր հնարավոր շահագրգիռ կողմերի միջև,
- ★ նպատակներն ու խնդիրները վերածել տրամաբանական ռազմավարությունների և պլանների,
- ★ սահմանել և հաստատել նախադրյալներն ու աշխատանքային գործընթացները՝ որակյալ երիտասարդական աշխատանք իրականացնելու համար,
- ★ ծրագրերի և գործունեության վերաբերյալ շարունակաբար տեղեկատվություն փոխանակել երիտասարդության ոլորտում տեղական, ազգային և եվրոպական այլ անդամների հետ և ակտիվորեն ներգրավվել ինչպես միջգերատեսչական, այնպես էլ միջոլորտային համագործակցության մեջ,
- ★ երիտասարդներին խորհուրդ տալ և տրամադրել նրանց իրավունքների, դրանց կիրառման հնարավորությունների վերաբերյալ մի շարք տեղեկատվություններ, ինչպես նաև մասնակցել տարբեր տեսակի տեղական, ազգային և միջազգային գործողություններին,
- ★ խթանել և աջակցել երիտասարդներին՝
  - հաղթահարել բոլոր տեսակի խոչընդոտները և սահմանափակումները սոցիալականացման և փոխանակման համար,
  - լինել ակտիվ քաղաքացիներ և ազդեցություն ունենալ հասարակության մեջ՝ ներառյալ քաղաքական որոշումներում մասնակցություն ունենալը,
  - բաց լինել աշխարհի համար և ակտիվորեն ներգրավվել տարածաշրջանային, ազգային, եվրոպական, և միջազգային շարժունության և համագործակցության մեջ,
- ★ երիտասարդների հետ միասին ձևակերպել իրենց ուսուցման նպատակները, որոնք պետք է կարևոր համարել՝ իրենց անձնական և սոցիալական զարգացման համար,
- ★ փաստաթղթավորել և տեսանելի դարձնել երիտասարդների՝ երիտասարդկաան աշխատանքի միջոցով ձեռք բերված ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսման արդյունքները՝ գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքները և աջակցել ձեռք բերված իրավասությունների վավերացմանը,;
- ★ երիտասարդական աշխատողներին տեղեկատվություն, կրթություն, ուսուցում և աջակցություն տրամադրել, որոնք համապատասխան են և հարմարեցված տեղական կարիքներին, ինչպես նաև խթանել և աջակցել իրավասությունների շարունակական զարգացմանը: .



- ★ գործել հստակ Էթիկայի շրջանակներում՝ վերը նշված հիմնական սկզբունքների հիման վրա (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, ՄԱԿ-ի հռչակագիրը Երեխայի իրավունքների և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի մասին),
- ★ առաջնորդվել երիտասարդների անձնական և սոցիալական զարգացման գործում աջակցելու ցանկությամբ,
- ★ ստեղծել նպաստավոր և վստահելի միջավայր, որն ակտիվորեն ընդգրկում, հզորացնում և սոցիալապես գրավում է, որը միևնույն ժամանակ ստեղծագործ է, և անվտանգ, զվարճալի է և լուրջ, խաղային է և համակարգված,
- ★ տեսնել անհրաժեշտությունները և փնտրել դրանց լուծման ուղիները,
  - ներգրավել երիտասարդներին երիտասարդական աշխատանքի գործընթացի բոլոր փուլերում
  - աջակցել երիտասարդներին ինքնակազմակերպվելու համար
- ★ ունենալ կարողություններ, այսինքն՝ գիտելիքներ, հմտություններ, տեսակետներ և արժեքներ, որոնք անհրաժեշտ են սույն կանոնադրության մեջ նկարագրված սկզբունքներին ու գործողություններին համապատասխան երիտասարդական աշխատանք կատարելու համար;
- ★ տեսնել երիտասարդների աշխատանքը՝ որպես փոխադարձ ուսուցման գործընթաց և հասկանալ իրավասությունների անընդհատ զարգացման անհրաժեշտությունը,
- ★ տեղեկացված լինել և կարողանալ ձևակերպել երիտասարդական աշխատողների դերն ու առաքելությունը, և չնպաստել իրենց նպատակներին ու գործողություններին՝ հիմնական սկզբունքների տիրույթից դուրս,
- ★ շարունակաբար և քննադատորեն անդրադառնալ, թե ինչպես են իրենց գործողությունները, ինչպես նաև տեղական խնդիրները, նպատակները, մեթոդները և գործունեության կազմակերպման ձևերը համապատասխանում հիմնական սկզբունքներին:



## Տեղական երիտասարդական աջխատանքի դրակի զարգացմանը նպաստող անհրաժեշտություններն են՝

- ★ փաստաթղթերի, արդյունքների, նախապայմանների, ցուցանիշների և նպատակների հետ կապված աջխատանքային գործընթացներին հետևելու հստակ և համապարփակ համակարգը,
- ★ տեղական իրողությունների և կարիքների կանոնավոր և արդի քարտեզագրումը,
- ★ շարունակական վերլուծության և դրանց արդյունքների արտացոլման հստակ ընթացակարգերը, և դրանց առնչությունը նախապայմանների, աջխատանքային գործընթացների, գործունեության և հետագա զարգացման անհրաժեշտության հետ,
- ★ երիտասարդության և երիտասարդական աջխատանքի ոլորտում շարունակաբար թարմացվող ազգային և միջազգային նոր հետազոտությունների, միտումների և մեթոդների համար հստակ ընթացակարգերը,
- ★ որակի զարգացման և նորարարությունների ընդունման շուրջ բոլոր շահագրգիռ կողմերի համագործակցելու ընդհանուր ջանքերը,
- ★ երիտասարդական աջխատողների շարունակական իրավասությունների զարգացումը՝ հիմնվելով հստակ իրավասությունների շրջանակի վրա, որը զուգորդվում է տեղական արդյունքների, կարիքների, ուժեղ և թույլ կողմերի վերլուծության հետ:



## Գործընկերներ ազգային մակարդակում



[www.iz.or.at](http://www.iz.or.at)



[www.site.erasmusplus-jeunesse.fr](http://www.site.erasmusplus-jeunesse.fr)



[www.leargas.ie](http://www.leargas.ie)



[www.iuventa.sk](http://www.iuventa.sk)



[www.jint.be](http://www.jint.be)



[www.jugendfuereuropa.de](http://www.jugendfuereuropa.de)



[www.jaunatne.gov.lv](http://www.jaunatne.gov.lv)



[www.movit.si](http://www.movit.si)



[www.mobilnost.hr](http://www.mobilnost.hr)



[www.inedivim.gr](http://www.inedivim.gr)



[www.aha.li](http://www.aha.li)



[www.anpcdefp.ro](http://www.anpcdefp.ro)




[www.ufm.dk](http://www.ufm.dk)



[www.tka.hu](http://www.tka.hu)



[www.jtba.lt](http://www.jtba.lt)



[www.mcf.se](http://www.mcf.se)



[www.noored.ee](http://www.noored.ee)



[www.rannis.is](http://www.rannis.is)



[www.nji.nl](http://www.nji.nl)



[www.opf.f](http://www.opf.f)



[www.agenziagiovani.it](http://www.agenziagiovani.it)



[www.dzs.cz](http://www.dzs.cz)



[www.movetia.ch](http://www.movetia.ch)



[www.aktivungdom.eu](http://www.aktivungdom.eu)



[www.juventude.pt](http://www.juventude.pt)

## Միջազգային կազմակերպություններ



[yjp-eu.coe.int](http://yjp-eu.coe.int)




[www.youthforum.org](http://www.youthforum.org)



[intercityyouth.eu](http://intercityyouth.eu)



[povwe.org](http://povwe.org)





«Երիտասարդական  
աշխատանքը հիմնված  
է՝արժեքի վրա...  
այն խթանում է  
երիտասարդների  
հրավոլները»:

